

№ 512



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

« 17 » 01 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 004 - 25

Նախաձեռնող՝

«ԼՈՒՔ» ՍՊԸ

ք. Երևան, Բաղրամյան 23 շենք, 26 բն.

Գործունեությունը՝

Մաքենիս բնակավայրում կրթահամալիրի կառուցում

Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 004 - 25

«17» հունվարի 2025թ.

Մաքենիս բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԼՈՒՔ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք, Մաքենիս բնակավայր

Ներածական մաս. «ԼՈՒՔ» ՍՊԸ-ի կողմից՝ փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Մաքենիս բնակավայրում կառուցել կրթահամալիր:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Վարդենիս համայնքի Մաքենիս բնակավայրում:



Մաքենիսի գեոմորֆոլոգիան ընդգրկում է լեռնային և բլուրային լանդշաֆտներ, տարածքը հարուստ է բազալտային ժայռերով և խոր ձորերով: Տարածքը աչքի է ընկնում կտրուկ լանջերով: Նախատեսվող գործունեության սահմաններում ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել:

Նախատեսվող գործունեության տարածքում ֆիզիկատերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն բացակայում են:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 12.000 քմ,
- կառուցապատման մակերես՝ 1742 քմ, (14.5 %),
- կանաչապատման մակերես՝ 7012 քմ, (58,4 %)
- ջերմոց՝ 32 քմ,
- մարզադաշտ՝ 1125 քմ,
- բետոնե դեկորատիվ սալիկներ՝ 1049 քմ,
- ասֆալտապատում՝ 1040 քմ:

Մաքենիսի կրթահամալիրը նախատեսվում է կառուցել վկայականով տրված հողամասի սահմաններում: Հին դպրոցի մասնաշենքը չի նախատեսվում ապամոնտաժել, քանի որ համայնքի որոշմամբ այն կկիրառվի այլ նպատակով:

Նախատեսվում է կառուցել տիպային կրթահամալիր՝ 200 աշակերտի համար դպրոց և մանկապարտեզ՝ 80 երեխայի համար: Կրթահամալիրը կունենա երեք իրար կցված մասնաշենքեր՝ երկհարկանի հիմնական դպրոց, մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ, երկհարկանի մանկապարտեզ և այլն: Հողամասի տարածքը ամբողջովին ցանկապատված է:

Առաջին հարկի ռեկոնստրուկցիայի երկու կողմերում նախատեսված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ, իսկ երկրորդ հարկում՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի, ռազմագիտության, ռոբոտատեխնիկայի կաբինետներ, մեթոդ կաբինետ և ուսուցչանոց:

Դպրոցի երկրորդ հարկում նախատեսված են դասարաններ, ինֆորմատիկայի կաբինետ, ռազմագիտության դասարան և ռոբոտաշինության կաբինետ:

Դպրոցի մասնաշենքի նկուղային հարկը օգտագործվելու է որպես թաքստոց: Հաշմանդամների համար թաքստոց տանող աստիճանը նախատեսվում է ամբարձիչով:

Հնարավոր է նկուղային հարկում նախատեսել գրադարան, խոհանոց, բուժկետ, պահոցներ, տղաների և աղջիկների սանհանգույցներ, էլեկտրավահանակ, ջրի ռեզերվուար, կաթսայատուն, կոյուղու պոմպարան:

Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ:

Հանդիսությունների դահլիճը նախատեսված է 200 հոգու համար: Մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա: Մարզադահլիճի չափերը կլինեն 24.70 x18.0 մ:

Գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ՝ դպրոցական բացօթյա միջոցառումների համար:



Մանկապարտեզի մասնաշենքը կունենա երկու հարկ՝ նախատեսված չորս խմբի : համար, որը միջանցքով կապված կլինի դպրոցի մասնաշենքի հետ:

Առաջին հարկում կլինեն հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, ննջասենյակներ, վարիչի, բժշկի և դայակների սենյակներ, իսկ երկրորդ հարկում կլինի նույն կազմը՝ վարիչի և բժշկի սենյակի փոխարեն նախատեսելով հանդիսությունների սենյակ:

Դպրոցի ամբողջ տարածքը բարեկարգված է, նախատեսվում է 4.0 մ x 8.00 մ ջերմոց, 26 մx14 մ բաց ցանկապատված մարզադաշտ, 100 մ երկարություն ունեցող վազքուղի, տնտեսական բաք, ավտոկայանատեղի, ինչպես նաև ցանկապատված տարածքով էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակներ: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված կլինի 318 հատ 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից:

Նոր դպրոցի էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական լուծումներն իրականացվելու են համաձայն Կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշման դրույթներին համապատասխան:

Կառուցվող կրթահամալիրի էլեկտրամատակարարման նախագիծը մշակված է համաձայն ՀՀՇՆ22-03-17, ՍՆԻՊ 3.05.06-85 դրույթներին համապատասխան:

Կրթահամալիրի ջրամատակարարումը կիրականացվի նկուղային հարկում տեղադրված ռեզերվուարներից, իսկ տաք ջրամատակարարումը՝ նկուղային հարկում նախատեսված կաթսայատնից:

Կոյուղաջրերը մաքրելու համար նախատեսվում է կառուցել 15 մ³/օր տարողությամբ մաքրման կայան, որն իրենից ներկայացնում է 3.20 մ խորությամբ ուղղանկյունաձև կառույց: Վերջնական մաքրված ջուրը կկուտակվի ջրամբարների մեջ՝ հետագայում ոռոգման նպատակով օգտագործելու համար: Ոռոգումից հետո ավելցուկային ջուրը հորատանցքերով կուղղորդվի դեպի ընդերք: Մաքրման կայանի տիղմի մաքրումը և տեղափոխումը իրականացվելու է համապատասխան կազմակերպությունների կողմից:

Նախատեսված է ընդհանուր օդափոխության մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման համակարգեր:

Կրթահամալիրի ջեռուցումը նախատեսված է իրականացնել էլեկտրական յուղային ռադիատորներով:

Նախատեսվում է կանաչապատման աշխատանքներն իրականացնել տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող ծառերով, բուսատեսակներով, ինչպես նաև նախատեսվում է ծաղկանոց և սիզամարգեր: Կանաչապատման համար ընտրվել են՝ թխկի սրատերև կարմրատերև՝ 11 հատ, գնդաձև իլենի՝ 16 հատ, սյունաձև թույա՝ 22 հատ, բարդի արծաթափայլ՝ 12 հատ, լաբորնում անագիրատերև՝ 5 հատ, բարբարիս՝ 23 հատ, ասպիրակ՝ 12 հատ, խենոմելես՝ 20 հատ, ֆորզիցիա՝ 9 հատ, եղևնի կովկասյան՝ 11 հատ, գիհի կազակական՝ 7 հատ:

Կանաչապատ տարածքները ոռոգելու համար նախատեսվում է ոռոգման ռեզերվուար: Ոռոգումը կիրականացվի կաթիլային եղանակով:

Նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի դպրոցի կողմից, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կպաշտպանվեն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Հողային աշխատանքներ իրականացնելիս ընդհանուր հողային հանույթը կկազմի 7530 մ³, որից հետլիցքը՝ 4400 մ³, մնացած 3130 մ³ հողային զանգվածը կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:



Շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան : շինարարության փուլում՝ կապված հողային աշխատանքների ժամանակ փորման, բեռնման, թափոնակույտման ընթացքում փոշու արտանետումներով: Նշված արտանետումները կլինեն ժամանակավոր, տեղայնացված, ենթակա արագ ցրման:

Մթնոլորտային արտանետումների հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական միջոցառումների իրականացմամբ, որոնցից են՝ շինարարական հրապարակում ջրցանման և փոշենստեցման աշխատանքների իրականացում, շինարարական մեքենաների երթևեկության կազմակերպում համապատասխան ծածկող պաստառների առկայությամբ, սահմանափակ արագությամբ (չի գերազանցի 30կմ/ժ արագությունը), սորուն նյութերի (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) շինարարական հրապարակում պաստառներով ծածկված վիճակում պահում և այլն:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է իրականացնել ջրցանի ծավալների այնպիսի հաշվարկ, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և ջուրը բավարար կլինի միայն փոշենստեցման համար: Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման, շինաշխատանքների կազմակերպման, աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար:

Կրթահամալիրի կառուցման ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի), փորման աշխատանքների ընթացքում առաջացած հողային զանգվածը, շինարարական աղբը, որոնց հեռացումն ու տեղափոխումը կիրականացվի «Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Վարդենիսի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայրում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված կլինի շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ, որոնց հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ՝ շին աշխատանքների ընթացքում օգտագործվող մեքենա-մեխանիզմների շահագործում բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում, աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում միայն օրվա ցերեկային ժամերին, ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողների անհատական պաշտպանական միջոցների օգտագործում և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ /հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն/, որոնց ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ:

Համաձայն գնահատման հաշվետվության նախատեսված են նաև շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված մի շարք այլ բնապահպանական միջոցառումներ, որոնք տրված են գնահատման հաշվետվությունում և բնապահպանական կառավարման պլանում:

Կրթահամալիրի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում, դպրոցի շինարարական տեղամաս՝ ամսական երկու անգամ:



2. Բնապահպանական, տեխնիկական, առողջության և աշխատանքային անվտանգության ամենօրյա հսկողություն, նկատված, հայտաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ ժամանակին տեղեկացում համապատասխան մասնագետներին:

3. Անհարժեշտության դեպքում փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակների չափագրումների իրականացում և այլն:

Նախատեսվող մշտադիտարկումների կետերի, գործիքային կազմի, եղանակների, հաճախականության վերաբերյալ տեղեկատվությունն առավել մանրամասն ներկայացված է գնահատման հաշվետվության բնապահպանական միջոցառումների մշտադիտարկումների պլանում:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մաքենիս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսումների ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Գեղարքունիքի մարզպետարանից, Վարդենիսի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
3. Կանաչապատումն իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մշտադիտարկման օրի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:



5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԼՈՒՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մաքենիս բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Նելլի Նասիրյան